ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՐԱՓԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի համար տարեկան 4 ոսկւոյ թղթադրամ.
Եւրոպայի և այլ տեղերի համար արկղ. 20 ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ վտառի ծախքը։
Բաժնէգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ոևէ յաւելման բաժնէգինին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Բ ՏԱՐԻ ԹԻՒ 22

1886 ՆՈԵՄԲԵՐ 3

(ՀՈԿՏ. 22 Հ. Տ.)

ՁՈՐՆԴՐՁԱԹԻ

Կը հրատարակուի Դշ. և Շբթ. օրերը

ՊԱՏՇՄԱՆՆԵՐ

Ծանուցմունք կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միլլակ գիրը 1 առնդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 առնդիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցեով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50)

ԹՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի տարօրինակ պատահարի. — Հայոց պանդխտութեան պատճառը, Հայաստանի աւերակը.—Հայկական արձանագրութիւն մը ի Մարսիլիա.—Ոսկւոյ արժէքի բարձրացումն.—Մեծ հրդեհ ի Պրայիլա (Բռամանիա).—Խնջոյք ի պատիւ Պրն. Է. Քասթէլարի. — Արտասահմանի լուրեր. — Առեւտրական.—Ծանուցումներ:

ՄԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՍՓՈՒՌՆԱԼԻՔ

Խմբագրական գործը մեզ այնպիսի դիրքի մէջ դրած է որ զանազան կողմեր գանուող մեր հայ աղգակիցների զանազան կարծիքներին և մինչև իսկ իրարու բոլորովին հակառակ կարծիքների հաղորդակցութեան մէջ կը գանուինք։ Բայց կը խոստովանինք որ մինչև այժմ չենք պատահած մի այնպիսի այլանդակ կարծիքի որպիսին գրած է մեզ ժընեվէն Գառան, Կաճան և ընկերութեան եռանդուն անդամներէ մին։ Այդ Պարոն կոչուելով «Արմենիա»ի 20րդ. թուին մէջ մեր առաջարկ մի միութիւն կազմելու համար «Հայաստանի մտաւորական, բարոյական և նիւթական զարգացմանը օժանդակելու նպատակով», բարկութենէն այնքան տոչորուած է որ մեր կացեր մի նամակ գրեր է մեզ որի մէջ ամէն իր պատկերը ցոյց առուղ անվայել բառերով յայտնելէ յետոյ թէ չուզեր այլևս առանալ «Արմենիան», կը յայտարարէ նաև թէ ինք, իբր ճշմարիտ հայ, ԻՒՐ ՐՈՒՅՔ ՈՒԺԵՐՈՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ Է ԽՈՐՏԱԿԱԶ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ՀԱՄԱՆՄԱՆ ԸՆԵՐՈՒԹԵԱՆՑ. պատճա՛ռ.—որովհետև այդ ուսանող Գառնը, մեր առաջարկածի նման ընկերութիւններէն ինք կը գըտնէ եղեր Հայ ազգի համար առ այժմ անպատեհանացուցիչ, վնասակար և այլն, և այս ալ անշուշտ Հայաստանի (զոր Թերևս իւր երազի մէջ տեսած լինի) պահանջներին վրայ իւր ունեցած կատարեալ հմտութեանէն։

Մի այդպիսի այլանդակ կարծիքի և ազատնախքի մենք արժէք չենք տար և այս տողեր ևս չպիտի գըրէինք. բայց որովհետև այդ մի քանի ուսանող պարոններ Մանչեսթրի մէջ իրենց աշակերտակիցների հետ վէճեր ունենալէ յետոյ բաժնուած գնացած են ծընեվ և այնտեղէ ալ իրր կարմիր յեղափոխականներ (ան-

տարակոյս լոկ խօսքով), կը խոստանան առաջնորդել Ազգին փրկարար ուղղութեամբ, մենք հարկ համարեցինք իրենց ամենէ գործունեայ անգամներէ մէկին ղրկած այդ գրութեան իմաստը գնել այստեղ, ցոյց տալու համար թէ ինչ այլանդակ միտքերի կը ծառայեն դոքա և թէ դոցա ուղղութեան հետևող ժողովուրդը ինչպիսի խորխորատներէ կառաջնորդուի։ Գրել թէ բոլոր այժեմս աշխատելու եմ խորտակիչ հանդիսանալ Հայաստանի մտաւորական, բարոյական և նիւթական զարգացմանը օժանդակելու նպատակով կազմուած ընկերութիւններին և միանգամայն «իբր ճշմարիտ հայ» նեղլիանալ դա խելքը գլուխը մի մարդու գո՛լթ է արդեօք, եթէ Պարոնը ինքնակալ մի բան կը համարի Հայաստանէն և Կիլիկիան ընդունակ հայ պատանիները բերել տալով Եւրոպա կամ Ամերիկա, օդնել նոցա մի արհեստ սովրելուն և կամ ուսում տանելուն և դիւրութիւններ տալ իրենց որ վերադառնալով հայրենիք նպատակն իրենց հայրենակիցներէն նիւթական, բարոյական և մտաւորական զարգացման, վերջապես եթէ ուսանողութիւնը անբարոյականացուցիչ, վնասակար մի բան կը համարի, ուրեմն ինք և իւր ընկերներ որ ուսանողներ են Եւրոպայի մէջ, խոստովանած կը լինին իրենց համար թէ անբարոյականացած և վնասակար մարդիկ են։ Այդ մի քանի ուսանող պարոններ որք դեռ ազգային կեանքին մէջ ոչ մի փորձառութիւն չունեցած կարհամարհեն իրենցմէ չբըրած ազգային ամէն ձեռնարկ, իրենց յայտնած վարդապետութեամբ կը դատապարտեն ամէն կողմէ. վասն զի ուսում և արհեստներ ամբողջ կամ վնասակար և անբարոյականացուցիչ է և կամ ոչ. և թէ այդպէս է, ուրեմն իրենք՝ ուսանողներ՝ անբարոյականացած և վնասակար դարձած են արդէն. եթէ այդպէս չէ, ուրեմն իրենք դարձեալ անբարոյականացած և վնասակար դարձած են որ ոչ միայն սուտ կը խօսին իրենց խղճի դէմ, այլև կը ցանկան իրենց բոլոր ուժերով աշխատիլ «Հայաստանի պատանիների միութիւն»ը խորտակելու. իրենք ոչինչ չեն կարող գործել և չեն ալ ամաչեր ուրիշների գործին արգելք հանդիսանալ...։ Մի՛թէ՞ ամէն աւելի այլանդակ մի միտք կրնայ լինիլ անբարոյականացուցիչ է ըսել մի միութեան համար որի նպատակն է արդէն ՕԺԱՆԴԱԿԵԼ Հայաստանի մտաւորական, նիւթական և ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ։ Եւ այդ Միութեան նպատակէն զատ բոլոր կանոններն ալ կրնան բարեփոխուիլ երբ հարկ գտած Միութեան Ընդհանուր ժողովի մեծամասնութիւնը (Տեսնել կանոնադրի Յօդ. 12) և Միութեանն ալ կարող է անդամակցիլ ամեն հայ առանց խարութեան։

Այդ մի քանի անփորձ պարոններուն տարօրինակ պատահարին համառօտակի, մենք ուզած ենք որ քանի քանի լուրջ մտածող և անկեղծ ազգասէր հայեր իրենց համամտութիւն յայտնած են մեզ «Հայաստանի զաւակներուն Միութեան» համար որ առաջարկած էինք «Արմենիա»ի 20րդ. թուով։ Սոքա ոչ միայն անբարոյական չեն գտներ մի այդպիսի միութիւն, այլև յաւելում կը յայտնեն թէ մենք ինչո՛ւ աւելի շուտ չներկայացուցինք մի այդպիսի միութիւն կազմելու ծրագիրը։ Մենք յուսով ենք թէ Հայաստանի ճշմարիտ զաւակներն ուր որ ալ գըտնուին, սիրտ փափաքն իրենց միութեան ձեռքը երկնցունել մեր արած առաջարկի համար և վերջապէս 50 հիմնադիրը անդամներն գանուելով կարելի պիտի լինի ձեռնարկել այդ միութեան կազմակերպութեանը և աշխատիլ նորա նպատակի իրականացման։

Մ. Փ.

ՀԱՅՈՑ ԳԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՒԵՐՈՒՄԸ

1877ի պատերազմին ժամանակ Եապին Գարահիսարի մեծամեծք՝ Աչխարհօվայի գիւղացւոց սուակ տուած են. Ինչպես գիտէք, բոլոր Հայաստանի գիւղացւոյ քաղաքացի մեծամեծք կուտան. բայց Եապին Գարահիսարի վաճառականք օրէնք մի հաստատեցին պատերազմի առեն որ 100ին ամենական 5 վճարէ գիւղացին. այն ժամանակ թղթադրամ կար և մի ոսկին չորս թուղթ կարժէր. օրինակի համար՝ եթէ գիւղացին 10 թուղթ առաւ, քիչ մը մէջ ոսկի եղաւ և ամեն մի ոսկւոյ համար տարեկան 60 դրչ. տոկոսիք պիտի վճարէ։ Խեղճ գիւղացին՝ կաչխատի որ պարտքէ ազատի. պանդխտութեան մէջ կիտանքը տալէ վերջ՝ բոլոր ստացուածքն ալ կ'ծախուշատկեն՝ կրկին պարտական կ'ըլլայ, և եթէ հայրենիք երթայ, իսկոյն օձիքէն կ'բռնեն, դի պարտքէն չէ՛ ազատեր խեղճը. ո՞վ գիտէ, ո՛րչափ ստակ առեր է՛, բայց կրնա՞յ հաշիւ պահանջել. եթէ հաշիւ պահանջէ, երկու ոտիկանով և մի քանի «էվէտա»ճիներով կուգայ բռնացնելին։

Մի՛թէ լալո՞ւ բան է տարեկան 100ին 60ը. ի՞նչ ընէ Հայը և Հայաստանցին. եթէ Բ. Դրան բողոքէ, ձայնը կը խղդեն. եթէ պարտքը տալ ջանայ, տարեկան չհասածը տոկոսին չբաւեր. խեղճ Հայաստանցին կաչխատի կաչխատի կ'յուսահատի, վերջապէս իւր ծնած օրը և երկիրը կանիծէ. դի ամեն ունեցածէն դրկուելէ վերջ, իւր սիրելի հայրենիքէն՝ բռնանքէն և որբացմէն հեռի պիտի մեռնի։ Շատեր ամեն ինչ մուռնալէ յետոյ հայրենիքնին ալ մուռացած են եթէ ըսեմ, չեմ սխալիր. դի ազատ երկրի մէջ ուղածնին կընեն. ալ ի՞նչ պէտք է ազգը և հայրենիքը իրենց.... Այս բոլոր չարութեանց պատճառ Հայաստանի բոլիսոճի էֆէնտիներն են. և մեր Ազգ. պատրիարքարանն ալ Եապին Գարահիսարի էֆէնտիներուն տունը պիտի չինէ հանգանակելով. արդեօք այն «ջոջ»երը ի՞նչ տուներ վրացած են մինչ հիմա և ի՞նչ տուներ ալ պիտի կործանին իրենց չինելու համար. ահա այս է Հայուն յուսահատութեան պատճառը և ինչո՞ւ չյուսահատի, քանի որ ազգասէր փրկութիւն չկայ, ուրեմն ազգին ալ փրկութիւն չըլլար։

Զգիտնաք թէ միայն Եապին Գարահիսարի մեծամեծք են որ այս անգթութիւնները կընեն. բոլոր Հայաստանի մեծամեծաց գործն այս է՝ մուռաձութիւն, յափշտակութիւն, մարդասպանութիւն են. են. եթէ այս չարութիւնները չընէ, կառավարութեան քով պատիւ չունենար, դի Թիւրքը այսպիսիներուն էֆէնտի կանուանէ և բարի մարդիկը կատէ. այս

ճշմարտութեան բոլոր Հայաստանցիք կը վկայեն ականատես լինելով։

Մեր Ներսպարնակ եղբարք կը ջանան հայրենիքի մի ծառայութիւն ընել և առանձ առանձ անուանք ընկերութիւններ հաստատելով միանալու տեղ կուսակցութիւններու բաժնուեցան. ո՛չ ապագէն մեր հայրենիքի կործանումը անմիաբանութենէ եղաւ։

Նպարաք իմ, միանա՛նք՝ միութեամբ գործենք. կ'կամենա՞մը բարերարութիւն մը ընել. վերցուիչեալ ցաւին դարմա՛ն մը փնտռենք. դի մեր թշնամին մեր մէջ է, մեր թշչուառութեան պատճառ՝ վատակները, Մեհրուժանները եղած են և պակաս չեն. նախ ներքին թշնամիին յաղթելու է, եաքը օտարին գիւրին կը լինի. դի մեր հայրենիքի ազատութիւնը սիրով և ամեն աստիճանի անձի միութեամբը կըլլայ, դիտցած ըլլաք։

Ըսեմ՝ թէ Հայաստանի դիւղացին ազատելու նպատակաւ մի պանդա ունենալ կամենամ, արդեօք Եւրոպայի մէջ ընկերութիւն մի՝ չե՞մ կրնար կազմել. միթէ ազատասէր՝ հատատարիմ՝ ազգասէր՝ հայրենասէր... հարուստներ կը պակսի՞ն մեր մէջ. օրինակի ազգաւ՝ նշանաւոր անձերէ 30—40 միանան՝ միթէ իւրաքանչ պատուով լ՚ինչ բարիքները չեն կարող գործել. միայն իրենց պատիւը կապող է աղքատը ազատել։ Ամեն մայրաքաղաքի մէջ հատատարիմ, հայրենասէր և բարեսէր հարուստներ կ'գտնուին, նոյա ձեռօք ընկերութիւններ հաստատելով նախ ազգասէր փրկութիւնը նպատակ ունենալու համ, որով յետոյ կը դիւրանայ հայրենիքինը։

Ահա այդ ժամանակ պիտի հատատամ Հայի և Հայաստանի փրկութեանը և ազատութեանը։

ՄՏԱԾՈՂ.

Ց. Դ. Եմէ այս նպատակաւ մի ընկերութիւն հաստատուիք Եւրոպայի մէջ, տարեկան 100ին 12ով գործածէ իւրաքանչ հայրենիքի մէջ, կարծեմ ընկերութեան բաւական օգուտ ըլլալէ դինի՝ ազգասէր ալ կազդուի ա նօգնութիւններուն ձեռքէն. դի մեր փըրկութիւնը նախ մարդով, եաքը դրամով կ'լինի։

ՆՈՑՆ

ՀԱՑԿԱԿԱՆ ԱՐՔԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ՄԱՐՍԻԼԻԱ

Բարեկամ մը որ վերջերս Մարսիլիան անցած է, հետևեալը կը հաղորդէ մեզ։

Մարսիլիոյ Հնադիտական Ցուցահանդիսին մէջ հայկական արձանագրութեան մը դանուիլը լսելով, դայի իսկոյն և պահապանին հարցուցի թէ ո՞ւր էր հայերէն արձանագրութիւնը. պահապանը պատասխանեց «այո» ըսելէ յետոյ, դնաց դոյ դարանէ մը մեծ դգուշութեամբ քովս բերաւ զայն։ Սև մարմարիոնէ 30 հարիւրորդամեդր երկարութեամբ և 20 հարիւրորդամեդր լայնութեամբ քար մ'է, լաւ յղկուած պատուանդանով և խիտ մաքուր արձանագրութեամբ մը որ էր հետևեալը։

Ի թուին ՌՃԺԲ մայիսի ԻԳ ի քաղաքն յԱմստերդամ, արդեամբք Զաքարի որդւոյ Դաւթի ձիւղայեցւոյ եւ ենթագրութեամբ կարապետի բանի սպասաւորի կազմեցաւ վէմս Օլանդիոս սուրբ կարապետին։

Թարգման արձանագրեալ երեսն ուրիշ բան մը չըլլալով, միւս կողմը չորս անկիւնները խաչեր կան. իսկ մէջտեղն աւելի մեծ խաչ մը, որուն չորս անկիւններուն վրայ զատ զատ դրուած են ՅՍ., ՔՐ., ԱՆ. և ԱՐ.։

Պահապանին հարցուցի քարին ուրկէ եկած ըլլալն. չէր գիտեր. միայն ասչափը կրցայ հասկնալ թէ Մարսիլիոյ եկեղեցիներէն միայն մէջ կը գըտնուի եղեր, ուրկէ թանգարան փոխադրեր են։ Ըստ իմ կարծեաց, այս քարը ժամանակաւ Ամստերդամի հայերը չենել տալով Մարսիլիոյ հայկական եկեղեցւոյն նուիրած են, վասն զի ինչպէս գիտեն, Հայք ժամանակաւ Մարսիլիա եկեղեցի ունէին, որ տալածման ենթարկուելուն համար անհետացած էր։

(Արեւելք)

ՈՍԿԻՈՑ ԱՐԺԼԻՒՒ ԲԱՐԶՐԱՑՈՒՄՆ

(Շարունակութիւն 21րդ թիւին)

Ա. յս առաջին կարծիքը դոյացնելէ վերջը՝ քննենք անդամ մը վիճակադրերը. արչափ ալ անկատար լինին ա նոնք տակաւին, պիտի տեսնենք թէ որքան պիտի հատատանն մեղ մեր համոզման մէջ։

Ֆրանսայի համար հետևեալ թիւերն առաջ կը դրուին, իրը ժողատպագրեալ՝ երկրին մէջ ոսկւոյ արհեստական սպառումը (տարեկան)

1820	Թուականներուն	10	միլիոն	ֆրանք
1830	»	15	»	»
1840	»	26	»	»
1850	»	35	»	»
1860էն	վերջը	45	»	»

Ա յսպէս տարու սկիզբներէն ի վեր՝ յառաջադատագրութիւնն անընդհատ և կարևոր է այնպիսի երկրի մը մէջ՝ որ արդէն քաղաքակիրթ և հարուստ էր։ Որչափ աւելի ղդալի տարբերութիւն մը կրնայ ենթադրուիլ ուրեմն ուրիչ այնպիսի երկիրներու մէջ՝ ուր 50–60 տարիներու ժամանակամիջոցի մը սկիզբը և վերջը՝ քաղաքակրթութեան և հարստութեան առաճանը մեծագոյն տարբերութիւն մը կրած է։

Վերջին տարիներու մէջ գլխաւոր երկիրներու արհեստական սպառուման համար՝ հետևեալ թիւերն առաջ կը դրուին (*)։ (տարեկան)

	քիլօկրամ	կամ միլիոն ֆրանք.
Անգլիա	17,000	58
Ֆրանսա	12,500	43
Գերմանիա	12,000	41
Ամերիկա	19,500	66
Զուիցերիա	10,000	34
Գումար միլիոն ֆրանք.		242

Դիտելի է թէ միայն այս երկիրներու արհեստական սպառումը քառասնակի է 1840է առաջ ոսկւոյ տարեկան ամբողջ արտադրութեան։ Այս իսկ ակներև կընէ թէ ոսկւոյ արհեստական սպառումն ինչ հսկայաքայլ յառաջադիմութիւն ըրած է այն տեղերէն ի վեր։ Որչա՞փ է այս սպառումը միւս երկիրներու մէջ։ Անկարելի է ճշդել՝ և ոչ իսկ վեր ի վերոյ դաղափար մը կազմել՝ ի բացակայութեան վիճակագրոց, բայց աչքի առջև բերելով Եւրոպոյ միւս երկիրներն, ամբողջ Ասիան, Աւստրալիան և Ափրիկիոյ ծովեզերեայ երկիրներն, և նկատելով թէ ոսկերչութիւն ամենէն նախնական և ամենէն տարածեալ արհեստներէ մին է, դիւրին է մակաբերել թէ այս սպառում ահագին պէտք է ըլլալ։

Պրն. Լանտրէն՝ 1863ին հրատարակեալ գրքի մը մէջ՝ կը յիշատակէ Զինացւոյ ընդհանուր մեկ սովորութիւնն՝ որոյ համաձայն ամեն Զինացի, նոր լուսնի առթիւ, ծննդեանց՝ ամուսնութեանց և մահուանց տարեդարձներուն, և ուրիշ շատ մը առիթներով՝ երկու հարիւրորդամեդր քառակուսի մեծութեամբ ոսկւոյ թերթ մը կայրեն՝ զայն ուրիշ երեք թղթերու մէջ մանաւոր դիւքով մը ծալլելով։ Ա յս կերպով իւրաքանչիւր Զինացւոյ մեկ տարուան մէջ վճարուցած ոսկւոյ արժէքը 5 ֆրանքի հասնելով՝ Պրն. Լանտրէն կը հաշուէ թէ 360 միլիոն Զինացի տարին 1,800 միլիոն ֆրանքի ոսկի պէտք են վըճայնել այս եղանակաւ։ Անշուշտ Պրն. Լանտրէն կամ անուշադրութիւն մը ըրած՝ կամ զուարճախօսել ուզած է. պէտք է կարծել թէ պզտի տղայք այս արարողութիւնը չեն կատարեր. և հատնօրէն ընտանեաց պետին մասնաւոր առանձնաշնորհութիւնն է այն, այլ այսպէս ենթադրելով իսկ, և 400 միլիոն Զինացւոյ վրայ 80 միլիոն միայն ընտանեաց պետ հաշուելով, միանգամայն ենթադրելով թէ ամենքն ալ քիչ շատ բարեկեցիկներն միայն այս ազգային ծէսը կը կատարեն, և անոնց թիւը 20 միլիոնի միայն վերածելով՝ բոլորովին համեստ հաշուով մը դարձեալ տարեկան 100 միլիոնի սպառում մը կը գտնենք։ Այլ ոսկեզօծութիւնն՝ այլ ոսկերչութիւնն՝ ինչ դումարներու կը կարօտին այս ընդարձակ և թանձրախիտ բազմութեամբ մը բնակեալ կայսրութեան մէջ։

Գալով Հնդկաստանի՝ ուր դրամական գործողութիւնք սրճամիով միայն տեղի կունենան՝ ներմուծեալ ոսկին հետևաբար լոկ արհեստական գործածութեան կրնայ յատկացուիլ կամ դրամի ձևով դարձեալ իրը ջարդ կը գործածուի և կամ կը պահուի կը թաղուի Հնդկաց ձեռօք, այնպէս որ ամեն պարագայի մէջ՝ դրամական չրջաբերութենէ կ'ելնէ։ Ահաւասիկ այս ներմուծման վերաբերեալ թիւեր որք բաւական լայս կատան խնդրոյն։

1835էն 1885, ղեղչելով արտածեալ ոսկւոյ դումարները, կը դանենք ներմուծման առաւելութիւն մը Լ. Ս. 128,707,000ի կամ կլոր հաշուով 3,245 միլիոն ֆրանք, այսինքն տարեկան 63 միլիոն ֆրանք՝ միջին հաշուով, իսկ 1885ին ներմուծման առաւելութիւնն եղած է 117 միլիոն ֆրանք։ Ա յս մեծագումար ներմուծմանց վրայ՝ 1835էն ի վեր՝ ոսկի դրամ կտրուած է միայն, Հնդկական Մօհիւր՝ որ բոլորովին անձնական դեր մը ունի երկրին դրամական չրջաբերութեան մէջ՝ 58 միլիոն ֆրանքի արժողութեամբ, հաշիւ 2%։ Ընել է թէ Հնդկաստան իւրմանին՝ այժմ տարին 100 միլիոն ֆրանքէ աւելի արժողութեամբ ոսկի կը վերցնէ չրջաբերութենէ։

Միացնելով ուրեմն Եւրոպոյ դըլխաւոր երկիրներու և Ամերիկայի արհեստական սպառման համար ծանօթ եղող թուոյն՝ 242 միլիոն ֆրանքի՝ Հնդկաստանի սպառումն՝ առաւել քան 100 միլիոն, և աւելցնելով առանց Զինաստանի և միւս ամեն երկիրներու՝ անծանօթ բայց անշուշտ շատ կարևոր սպառումն, տպահովապէս կրնանք ըսել թէ առնք ամենքն ի միասին՝ ոչ միայն կը հակակշռեն այլ և կը գերազանցեն այժմեան 513 միլիոնի արտադրութիւնը։ Իսկ եթէ հաշուի առնենք նաև դրամոց մաշուածութենէ և ծովային սպառածներէ յատաջ եկած կորուստներն, կատարեալ համոզում կը գոյացնենք թէ չրջաբերութեան մէջ գտնուող դրամ ոսկին ոչ ևս կաւելնայ՝ այլ և սկսած է ընդհակառակն նուազիլ։

(Շարունակելի)

ՄԵՆ ՀՐԴԵՀ Ի ՊՐԱԶԻԼԻԱ (ՐՈՒՄԱՆԻԱ)

Հոկտեմբեր 14/26ին գիշերը, ժամը 10½ին ըստ Եւրոպայոց, սարսափելի հրդեհ մը պատահելով մինչև լոյս այրեցաւ մեկ մեծ և փառաւոր պանդոկ մը «Հօթել Պալիարիա» անուանեալ որ 2 յարկան չինուք էր և 12 մեծ խանութներ ունէր տակը. նոյնպէս և այրեցաւ 20 կառք տուն և խանութներ և մեկ գալոց ապրիլմոյ բաւական մեծութեամբ։ Բայց ան ալ տպահովութեան դրուած ըլլալով, անանկ կը հաշուեն որ եղած կորուստը 75,000 ֆրանկէն աւելի չէ։ Շատերէն խնայ որ 30 տարիներէ ի վեր տանկ

(*) Այս թիւերը կը քաղենք Պրն. Օբօսար Հօրդի «Ժամանակակից դրամական պատմութիւն» «Histoire monétaire de notre temps» ընդարձակ եւ իւր տեսակին մէջ՝ վիճակագրական նկատմամբ՝ առաջնակարգ գիրքին։ Դրամներու եւ բդպատրամներու վերաբերեալ մանրամասն ծանոթագրութիւնք կրնան գտնել հոն՝ խնդրոյն ճետաքրքրուող անձինք։ Պիտի չի ծածկենք սակայն թէ՝ քանի մը յայտնի մոռացումներ եւ հակասութիւններ (այսքան ընդարձակ աշխատութեան մը մէջ անխուսափելի) կը նշմարուին հոն, եւ թէ մանաւանդ՝ նեղիճակին երկմետաղեան վարդապետութիւնք մեզ համոզելու բնութիւնը չունին բնաւ։ Ուշադիր ընթերցող մը պիտի դիտէ թէ՝ իւր իսկ յիշատակած բիւերն ու դիտքերն որչափ անյարմար են իւր ջատագոված դրութեան։

հրդեհ մը տեղի ունեցած չէ Իպլայիլի մէջ. խանութպաններէ չատեր ոմանք առաւօտ եկան, բանալիները ձեռքերնին մնացին. ինչու որ չէին իմացած. հոս սովորութիւն եղած չէ որ կրակ եղած ժամանակ հասարակութեան իմաց տրուի կառավարութենէն։

1885, նոյտ. 15/27 Գ. Ա.
Իպրայիլ (Րումանիա)

ԽՆԶՈՅՔ Ի ՊԱՏԻՒ Պ. ՔԱՄՊԷԼԱՐԻ

Նախորդ թուով հրատարակեցինք թէ Ճուխա-Լասթեական գաշնակցութիւնը նոյ. 4ի (վաղը) երեկոյ մի խնջոյք պիտի տայ անուանի Գ. Քասթէլարին որ Սպանիական Հանրապետութեան նախագահն ալ եղած է երբեմն. Պրն. ժ. Գրուսալիին փաթիլին հոկտ. 31ին մեզ ղրկած մի դրութենէն կը տեղեկանանք որ Փարիզի «Հայ հայրենասիրական ընկերակցութիւնը» որոշեր է մի բնծայ մատուցանել այդ առիթով Գ. Քասթէլարի, այն մեծ մարդին որ Իսպանիան Սպանիական ազգին որ ժամանակին պատած է Լևան Ջ մերթ պատասար Գահիրէի մէջ գերի ձեռնէն. Մատուցելիք ընծայներն են Հ. Ղևոնդ Ալիշանի հրատարակած «Միսուան»ը, Կիլիկիոյ այդ համազրութիւնը, չքնաղագէս կազմուած և ոսկեզօծուած, և ժամկոչին վրայ ոսկի տառերով գրուած. «Ընծայուած առ Լեմիխօ Քասթէլար, Վեհանձն Սպանիոյ Մեծ Մատաղոյն — Հայ Հայրենասիրական ընկերակցութենէն.—4 Նոյեմբեր 1886, Փարիզ, ի խնջոյս Ամէնօ-Ճուխա-Լասթեական դաշնակցութեան». Նաև Գ. ժ. Գրուսալիէն Սպանիոյ վրայ հրատարակած քաղաքական, պատմական և տնտեսական յօդուածները Revue Françaiseի մէջ՝ դեղեցիկ կերպով կազմուած և վրան ալ ոսկի տառերով գրուած «Ժան Պրուսալի— Խնդիր Հայկական», պարագային յարմար բանախօսութեամբ պիտի մատուցանէ Պ. Լ. Քասթէլարին։

ԱՐՏԱՍՄԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ Բրիտանական կառավարութիւնը խնդրեր է որ թոյլտուութիւն լինի երկու անգլիական պատերազմանաւերի անցնիլ Տարտանէլէն։ Սալիսբիրը մերժեր է դաշնագրութիւններուն վրայ յենլով։

—Կապտան վաշան Պ. Սամպսոնի հետ ունեցած վերջին տեսակցութեանը մէջ երբ պահպաներ է Ռուսիոյ պահանջները ձերբակալուած սպայներուն արձակման և Սպ. ծովակալ յետադիման մասին, Պ. Սամպսոնի պատասխաներ է իրեն թէ ո՛չ մէկ ափրութիւն իրաւունք չունի խառնուելու Գալիպոլիի ներքին գործերուն, թէ Սպ. ծովակալը չկրնար յետադարձել ոչ մէկ պատրուակով և թէ պէտք է համոզուիլ որ ռուս զօրքերուն Գալիպոլիս մտնելը Օսմանեան կայսրութեան վերջնական անկման նշանն համարելու է։

—Վառնայէն կը հեռագրեն թէ կերեւի որ Ռուսիան կը պատրաստուի ուժէ պատահականութեան դէմ. Սև ծովի բոլոր նաւահանգիստներին մէջ ածուխի պատրաստութիւններ տեսնուած և պահուած են։ Յամաքային զօրքերի հրամատարները գաղտնի հրահանգներ ստացած են. 40,000 զօրք կեդրոնացած է Օտէսայի մէջ։ Ռուսական երրորդ նաւ մի ևս եկած է Վառնա, 418 մարդով և 18 թնդանօթով։ Նաւին հրամատարը ցամաք եղնելով այցելութիւն տուաւ Ֆրանսական, աւբտրիական և հելլենական հիւպատոսներին։ Անգլիական հիւպատոսին ղրկեց իր այցետոմս։ Ժողովուրդը համոզուած է որ առաջին յարմար պատրուակը ներկայացնին ալէս, ռուս զօրքերը պիտի եղնեն ցամաք։ Պուքրէշէն ալ կիմացուննեն թէ, Ռուսիայէն եկած լուրերին նայելով, ռուս զօրքերը պիտի մտնեն Պուլկարիա, Պուրկաղ և Րուսճուք։ Ռուսական պատերազմանաւերի գալուստը պաշտօնապէս իմաց տրուած է։ Ստոյտ կը թուի թէ Զարը պիտի տապալէ խնամակալութիւնը և պիտի լուծէ Սոպրանիէն։ Վերջապէս Պուլկար խնամակալութեան խոհեմութեան և հաստատամտութեան հակառակ, անխուսափելի կերեւի բացարձակ կուիւը Ռուսիոյ դէմ, որովհետև Քառլպարս Զօրավարը հիմնուելով այն քաղաքական ցոյցերի վրայ որոնք վառնայի և մանաւանդ Ֆիլիպէի մէջ եղած են ռուսահպատակներուն և ռուսասէրներուն դէմ, Պուլկար կառավարութեան մի վերջնագիր ղրկեր է որի մէջ գոհացում կը պահանջէ արդէն եղածներուն համար և ապագային համար ալ ապահովութեան խոստում կը պահանջէ։ Զօրավարը գոհացուցիչ պատասխան ուզեց մինչև երեք օր, ապառնալով որ հակառակ պարագայի մէջ պիտի մեկնի Սոֆիայէն հիւպատոսարանի մարդերովին մեկտեղ, հետևանքներէն պատասխանատուութիւնը թողլով Պուլկար կառավարութեան վրայ։ Կառավարութիւնը անմիջապէս պատասխանեց թէ մի չըջաբերական կը ղրկէ բոլոր նահանգապետներուն պատուիրելով իրենց որ խստութեամբ հսկեն ռուսահպատակներուն ապահովութեան. միևնոյն ժամանակ կը խնդրէ Զօրավարէն որ այդ հպատակներուն անուններն և բնակարանները ցոյց տրուին իրեն, որպէս զի յանցաւորները բռնուին և պատժուին։

—Կ. Պոլսէ կիմացուննեն թէ Պուլկար խնամակալութենէն մասնաւոր պաշտօնով Կ. Պոլիս ղրկուած Գ. Կրէքով անյայտ եղած է Բ. Դրան մօտ արած ձեռնարկներուն մէջ։

—Թիրնովայէն կ'հեռագրեն հոկտ. 31ին թէ նոյն օր Մեծ Սոպրանիէի բացումը եղած է, խնամակալութեան կողմէն Պ. Ստամպուլովի կարդացած մէկ ճառովը։ Այնուհետև դիւանի ընտրութեան ձեռնարկուած է որմէ 4—5 օր յետոյ ալ Իչխանի ընտրութիւնը պիտի լինի։

—Պեռերլուրգէն կը հեռագրեն հոկտ. 31ին թէ արտաքին գործերի նախարարութիւնը անպատեհ կերեւի մի տեղեկագիր հրատարակելէ այս առնչով. «Սահմանագծութիւն Գիւղխատանի, բանակցութիւններ Ռուսիոյ և Մեծն-Բրիտանիոյ, 1872 էն 1885»։ Տետրակը ռուսերէն լեզուով գրուած է, գէմն ալ ֆրանսերէնն գրուած։ Պ. որ կիմբա այս հրատարակութեամբ կուզէ ցոյց տալ Ռուսիոյ ի գործ գրած ազդու քնիթացքը Անգլիոյ քաղաքական խորամանկութիւններին յաղթելու համար և յայտարարել միանգամայն թէ այս կերպով պիտի վարուի պուլկարական խնդրի լուծման համար ալ։

—Դիլէն-Ջէնէն կը հեռագրեն թէ Ջինական նաւատորմը հրաման ստացած է պատրաստներ անել Քորէայի ծովին մէջ, իբր մի ցոյց Ռուսիոյ դէմ։

—Սօֆիայէն կը հեռագրեն թէ պատերազմական նախարարը որոշեր է զօրքերը ղրկել Վառնա, ի հարկին դիմադրելու համար եթէ Ռուսերը ուզեն գրաւել այդ քաղաքը. Այդ զօրքեր չպիտի ղրկուին Շումլայէն և Րուսճուքէն որ այնտեղի բերդապահ զօրքերուն վրայ շատ վստահութիւն չկայ եղեր. Նոյն տեղէն մի ուրիշ հեռագիր կըսէ թէ ամենքն ալ Խնամակալութեան և կառավարութեան անկումը մօտալուտ կը համարին և շատեր կսկսին Ռուսիոյ կողմը յարիլ։

—Ձիպրալտարէն նոյ. 4ին կը հեռագրեն հետևեալը. «Մի քանի կառավարութիւններ և գլխաւորապէս Ֆրանսան դիմումներ արած լինելով Անգլիոյն Եգիպտոսէն իր զօրքեր հանելու համար, Անգլիական կառավարութիւնը դրազուած է այժմ այդ խնդիր ուսումնասիրելով։ Անգլիոյ արտաքին գործերի պաշտօնատան երկրորդ քարտուղարը Լոնտոնէն ձիպրալտար եկած է յատկապէս խորհրդակցելու համար Զօպէհր փաշայի հետ որ երկու տարիէ ի վեր գերի բերուած է հոս»։

—Լոնտոնէն կը հեռագրեն նոյեմբեր 1ի երեկոյեան թէ Նախարարական Խորհրդի նոյն օրն նիստը 3 ժամ է տևեր և խորհրդակցութեան մէջոյին արտաքին գործերի նախարար Լորտ Իոլսլէյ դուրս ելեր և գնացեր խորհրդակիցներ է օսմանեան և իտալիան դեսպաններին հետ։ Այդ նիստի մէջ գլխաւորապէս եգիպտական խնդրով զրազած են։ Կը հաւատան թէ Անգլիական կառավարութիւնը խորհուրդ տուեր է Պուլկար կառավարութեան անպայման հնազանդիլ Ռուսիոյ որպէս զի Ռուսիան Ֆրանսան անջատուի եգիպտական խնդրոյն մէջ։

—Թիրնովայէն կը հեռագրեն նոյ. 1ին թէ Գ. Կրէքոֆ, Պուլկարական դործակատար ի Կ. Պոլիս, հրահանգ ստացած է նախագահ ընել ռուսական դեսպան Պ. Նէլիւտոֆին թէ ի՛նչ հիման վրայ կարելի է մի համաձայնութեան գալ և ամեն կառակցութեան պատճառները խափան մի կառավարութիւն կազմել Սոֆիոյ մէջ։ Նոյն տեղէն եկած մի հեռագիր կըսէ թէ Գ. Գ. Կրաբէֆ և Պէնեֆ սպայներն արձակուեր են բանտէն կիրակի օր։ Ինչպէս յայտնի է, տեղը բանտարկուած էին օգոստ. 21ի պետական դաւադրութեան յանգանքով։

—Վիէննայէն երկեկ եկած մի հեռագիր կըսէ թէ ռուսական երեք հատ պատերազմանաւեր և ինը թնդանօթանիդ նաւեր Սեաստոպոլը թողլով մեկնած են դէպի Վառնա։

—Լորտ Իոլսլէյ երկուշաբթի օրի նախարարական նոտին դոհացուցիչ տեղեկութիւններ հաղորդեր է եգիպտական խնդրին վրայ, մասնաւորապէս Բ. Դրան և Ֆրանսայի ուղեւորելիք դիւրքին նկատմամբ։ Կ'կարծուի որ այս խնդրի նկատմամբ մօտերս մի չըջաբերական պիտի ուղղուի մեծ պետութիւններուն։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՈԿՏ. 26ԷՆ 2 ՆՈՅ,

ԳԻՐԱՑՈՒԹԻՒՆ

ԲՈՒՐԴ. Հրապարակի դրութիւնը միշտ հաստատ է. շաբթուս վաճառումները կը հասնին 750 հակի որույժ կը նշանակեմք. 35 հակ վաճառնա Քասապպաշի 130 ֆր. 30 հակ Հալէպի լուացուած 220 ֆր. 150 հակ Էնքարէ լուացուածը 200 ֆր. և չը լուացուածը 125–130 ֆր. 100 քիլօ. Ծացածները մանր քանակութեամբ զանազան տեսակներէ։

ԲԱՄՊԱԿ. Դժուարաբ վաճառումներ կըլլան. մոս մը Սատանայի հին ապրանքներ վաճառուեցան ըստ տեսակին 47½էն 51 ֆր. 50 քիլօն։

ՄԵՏԱՔՍԵԼԷՆ. Պահանջը տեւական է, շաբթուս վաճառումներէն կը նշանակեմք. 40 հակ զանազան մետաքսներ, 3000 քիլօ կիպրոսի կոկոն ժապօն տեսակէն 12¾ ֆր. 2200 քիլօ Նուխայի կոկոն 9¼ ֆր. 1500 քիլօ Պուխարայի ֆրիզոն 10¼ ֆր. 2500 քիլօ Սիրիոյ ֆրիզոն 9¼–9¾ ֆր. 8000 քիլօ ֆրիզոնէ 3,15 ֆր. քիլօն։

ԿԱՆԵՓ. Հրապարակը հաստատ է, բայց առնողները բարձր դիներու կը դժուարին, ըստ տեսակին 64–68 ֆր. 100 քիլօն։

ՎԱՐՍԱԿ (avoine). Անչարժ է, գիները 11–13 ֆր. 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs). 12 ֆր. 100 քիլօն։

ԼՈՒԲԻԱ. Տրապիզանի և Օրտուի մաքրուած տեսակները պատրաստ 25½ և նոյ.-դեկտ.ին յանձնելի 23–24 ֆր. և Ռումանիոյ ապրանքները 14¾–15 ֆր. 100 քիլօն։

ԹՈՒՉՆԱԿԵՐ (alpiste). Շարժման և բարձրութեան նշաններ կերեւին։

ՇՈՒՇՄԱ (sésames). Թուլցած է, Թարոսւս և Եաֆայի ապրանքները 40 ֆր. 100 քիլօն։

ԽԱՇԽԱՇ (pavots). 28½ ֆր. 100 ք.։

ԿՏԱԻԱՀՍՏ. 25½ ֆր. 100 քիլօն։

ԿԱՂԻՆ. Ապրանքի չը դոյութենէն կը փնտռուի 38½–39 ֆր. և կաղինի մէջ պատրաստ ապրանք չատ կուզուի 99–100 ֆր. 100 քիլօն։

ԾԻՐԱՆԻ ԿՈՒՏ. 75–78 ֆր. 100 ք. լաւ տեսակները։

ԴԵՂՆԱՀՍՏ. 130–155 ֆր. 100 ք.։

ՍՑՏԻ ՄՈՐԹ. 29–35 ֆր. տուզնան։

ԱՐՏԱՍՄՈՒԹԻՒՆ

ՇԱՔԱՐ. 3 քիլոնոցը 42 և 2 քիլոնոցը 42½ ֆր. 100 քիլօն։

ՍՈՒՐՃ. 62–73 ֆր. 50 քիլօն Րիօի ապրարքները։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ. Ըստ տեսակին 3, 25–4 ֆր. քիլօն։

ՊՂՊՂ. 97–98 ֆր. 50 քիլօն։

Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԴԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱՑԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«Թիֆլիզի հայ. գրբ. հրատարկ. ընկերքե.»

==

Մեծանուն բանաստեղծ Գամառ–Քաթիպայի (Ռ. Գաւականեանց) ոտանաւորները պարունակող մի գիրք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը դրուած է հեղինակին պատկերը։ Գամառ–Քաթիպայի բանաստեղծութիւնները մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներին, ա-ւելորդ կը համարինք դրել այդ մասին։

Կը ծախուի «Ազմէնիա» լրագրի խմբագրատունը ի դէն 1 ֆրանգ և 75 սանթիմի։ Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար 2 ֆրանգ փոստի ծախքովը հանդերձ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՄՐ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ » 20 »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ » 40 »

Ընդ ծախուին Պարսկ., «Ազմէնիա» լրագրի խմբագրատունը։

Փոստ քաղաքացիներին կը դրկուի փոստով, եթէ վերոյգրեալ գիներով Ֆրանսական, բրքական կամ ռուսական փոստի թղթադրոշմ դրկեն «Ազմէնիա»ի խմբագրատունէն։

ՍԱՐԳԻՍ Գ. ՀԱԼԱՃԵԱՆ

ՁԱՆՁՆԱՎԱՃԱՌ Ի ՄԱՐՍԷՅԼ

ԱՐՏԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՆԵՐԱԾՈՒԹԵԱՆ

ԱԳՐԱՆԱՑ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ

Ե Ռ Ի Ք Ր

ՀԱՑԻ ՄՈՒՍՈՅՈՒԱԾ ԴԱՍԸ ՊԱՇՏՊԱՆՈՂՆԵՐԻՆ

Հայաստանի վիճակին նկատմամբ արտառուչ մանրամասնութիւններ և մուտ-ծութիւններ պարունակող մի տետրակ է։

Հայաստանի բնակիչներին Պ. Խրիմեան կը ծախուի «Ազմէնիա» լրագրի խմբագրատունը։ Դէն 40 սանթիմ, փոստի ծախքովը հանդերձ։

Մի բանաստեղ հայ կը ցանկայ ուղղել Բաֆֆիի «Դատիճ Բէկ»ի Ա հատորը և Խ. Աբովեանցի «Վէրք Հայաստանի»ն կը խնդրուի որ ուղղակի իմացանէ խմբագրութեանս թէ ի՛նչ գնով կը համաձայնուի տալ Լաւ վճարում կը խոստացուի։

—

Ազգային երաժշտական Ազիանայիշատակ Թաշճեան Նիկողոսի աշակերտներէն մէկը ոչ լաւ ձայնագրութեան գիտութեամբը եկեղեցական երգեցողութեան քոչ տեղեակ ըլլալուն վաւերական վկայականներ ալունի, կը փափաքի ազգային եկեղեցւոց և դպրոցի մէկուն մէջ պաշտօնավարել։ Ուզողը կրնայ դիմել խմբագրութեանս, անոր հետ բանակցութեան մանելու համար։

Ինչպէս կը տեսնուի լրագրիս դերեսը դրուած ծանուցումէն, Tribune des Peuples ընկերվարական ամսաթերթի յունիս—օգոստոսի թիւը հայերի նկատմամբ համակրական յօդուածներ կը պարունակէ։ «Ազմէնիա»ի խմբագրութիւնը բաւական քանակութեամբ ստացած է այդ թիւէ, ղրկելու համար իւր բաժանորդներէ ցանկացողներին։ Մէկ օրինակը կը տրուի 25 սանթիմի մարսէյլի մէջ։ Ուրիշ ամեն տեղերի համար 30 սանթիմ, փոստի ծախքովը հանդերձ։

LA TRIBUNE DES PEUPLES

Ինչպէս կը տեսնուի լրագրիս դերեսը դրուած ծանուցումէն, Tribune des Peuples ընկերվարական ամսաթերթի յունիս—օգոստոսի թիւը հայերի նկատմամբ համակրական յօդուածներ կը պարունակէ։ «Ազմէնիա»ի խմբագրութիւնը բաւական քանակութեամբ ստացած է այդ թիւէ, ղրկելու համար իւր բաժանորդներէ ցանկացողներին։ Մէկ օրինակը կը տրուի 25 սանթիմի մարսէյլի մէջ։ Ուրիշ ամեն տեղերի համար 30 սանթիմ, փոստի ծախքովը հանդերձ։

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՁԱՆԱՁԱՆ ԸՆՏԻՐ ԴՐԵՄՆԵՑ

Ազգային վիպագիրը Պրն. Բաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐԸ։ Այս գիրքը կը ծանօթացնէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի պատերազմական ցեղերի և հայերի դրութեան, վաճառի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի խօսքով թէ՛ իբրև ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իբրև հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ դասուի այս գիրքը ամեն հայրենասէր Հայի տունը։

* *
*

ԲԱՑԱՑԻԻ ԳՈՐԾԵՐԸ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՏՈՐ Ա.

Ազգային վիպագիրը Պրն. Բաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐԸ։ Այս գիրքը կը ծանօթացնէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի պատերազմական ցեղերի և հայերի դրութեան, վաճառի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի խօսքով թէ՛ իբրև ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իբրև հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ դասուի այս գիրքը ամեն հայրենասէր Հայի տունը։

ՋԱԼԱԼԷԴԻՆ

1877ի ռուս–Թիւրքական պատերազմի ժամանակ Եէյլա Ջալալէդդինի արշաւանքին պատճառով Տաճկաստանի հայերի կրած ազէտներուն մէկ ազէտալոյծ նկարագիրն է։ Գրքին սկիզբը կայ հեղինակին, Պ. Բաֆֆիի պատկերը։

* *

Վերոյիշեալ երկու գիրքեր կը ծախուին «Ազմէնիա» լրագրի խմբագրատունը. ԿԱՅԾԵՐԸ Հատոր Ա. 6 ֆր. և 50 սանթիմ։ «Ջալալէդդին»ը, 2 ֆրանգ և 30 սանթիմ. Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար փոստի ծախքովը հանդերձ՝ ԿԱՅԾԵՐ Հատոր Ա. 7 ֆրանգ. «Ջալալէդդին» 2 ֆր. և 30 սանթիմ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐ Ա.

ԿԵՆԴԱՆԱԿԻՆ ՆԻՒՍՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՑՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Ն. Տաղաւարեան Էֆէնտիի այս բազմահատոր գործն՝ որ ժամանակէ մի վեր տետր տետր կը հրատարակուէր, լրացած է։

Այս գործն՝ իբր գիտական մեծ աշխատասիրութիւն՝ իբր տեսակին մէջ կրնայ առաջին համարուիլ ի Հայս Կ'ուսուցանէ ինչ որ հարկ է գիտնալ մարդս մը իւր մասնաւոր նկատմամբ։

Գրուածոյ վերջը կը գտնուի հայֆրանսերէն բառգրքոյկ մը որ կը դիւրացնէ գիտական նորատեղծ բառից հասկացողութիւնը։

Գիրքը չորս 400 երեսներէ կը բաղկանայ, մանրատ տպագրութեամբ և 226 դեղեցիկ նուրբ պատկերներով զարդարուած, որոց մասին հեղինակը որ եւ է զոհազրութիւն չէ խնայած և որք կարի լաւ կը դիւրացնեն ուսումը։

Կեդրոնատեղին է Ամասեան դպրատունն ի Պահչէ–պափու Համիտիէ ճանապարհ թիւ 34։ Գինն է 40 դրշ.։

BIBLIOGRAPHIE
LA
TRIBUNE DES PEUPLES

REVUE INTERNATIONALE DU MOUVEMENT SOCIAL.

Dans les cinq parties du monde

Rédaction et administration *Librairie des deux mondes* Paris, 17, rue de Loos.

Abonnement France : Un An 5 francs Union postale 6 francs.

Sommaire du N° 6 Septembre-Octobre

La Révolution dans les Beaux-Arts CASSIUS. — La situation politique et économique dans la République Argentine. TH.. — La Crémation Électrique, D' ROSELLI. — L'organisation des Fénians. — Les affaires d'Arménie, UN ARMÉNIEN. — Le Code industriel en Russie GOLOVINE. — MOUVEMENT SOCIAL INTERNATIONAL EUROPE Grèce, AFRIQUE Madagascar, Sénégal, Maroc, AMÉRIQUE DU NORD Canada, États-Unis, Guatemala, Nicaragua, Mexique, San Savaldor, AMÉRIQUE DU SUD, Pérou, Bolivie, OCÉANIE, Australie.

REVUE BIBLIOGRAPHIQUE INTERNATIONALE

Livres, Journaux, Revues,

Un numéro de cette revue est envoyé à TITRE D'ESSAI *gratis et franco* à tous ceux de nos lecteurs qui en feront la demande à la LIBRAIRIE DES DEUX-MONDES Paris 17, rue de Loos, avec le BULLETIN donnant l'ANALYSE, des publications en vente à cette librairie.

On s'abonne sans frais dans tous les bureaux de poste.

A. H. CREET & C^ie

COWNPORE N. W. P. INDES ANGLAISES

Négociants-Importateurs, Exportateurs, Commissionaires, Commissaires priseurs, Contractants (Fournisseurs) et fabricants de cuirs de toute qualité.

Ayant eu une très longue expérience dans les diverses branches sus–nommées, nous sommes prêts à recevoir des marchandises à la commission pour la vente tractative ou aux enchères publiques, dans des conditions qui seront trouvées réciproquement avantageuses et satisfaisantes.

En échange des marchandises Européennes nous pouvons fournir des marchandises fabriquées aux Indes, n'importe quelle quantité, des premiers choix comme suit :

Des jouets d'enfants de Lucknow, articles de laiton et des draps d'or de Benarès, dinanderies de Moradalad, bijouteries d'or et d'argent de Delhi, châles, étoffes de Cachemire, etc.

Ayant des locaux spacieux pour l'étalage des marchandises en commission et pour la vente aux enchères, nous pouvons en toute confiance recommander notre maison à quiconque voudra entrer en relations d'affaires avec nous, et nous serons bien aises de recevoir des communications et des échantillons dans ce but.

Références

BANK OF BENGAL ;

ROHILCNUD ET KUMAON BANK ;

AGRA BANK LIMITED.

Si c'est nécessaire, nous serons heureux de fournir d'autres références.

Toute communication doit être adressée à nous directement en anglais très détaillée, avec conditions et conventions y relatives.

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ.

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.